ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԸ

Մետաղային հանքային հարստություններից հատկապես շատ են գունավոր մետաղների՝ պղնձի, մոլիբդենի, կապարի, ցինկի և ալյումինի հումքի պաշարները: Պղինձը տարածված է **պղնձահիրաքարային հանքավայրերում**, որտեղ այն հանդես է գալիս ծծմբի հետ միացությունների ձևով: Այդպիսի խոշոր հանքավայրեր են **Ալավերդին և Կապանը** (տես քարտեզը): Հայաստանում պղինձը հանդիպում է նաև մոլիբդենի հետ՝ **պղնձամոլիբդենային հանքավայրերում**: Հայտնի են **Քաջարանի, Ագարակի** և վերջերս շահագործման հանձնված **Թեղուտի** հանքավայրերը: Քաջարանի և Կապանի հանքաքարը, բացի գլխավոր մետաղներից, պարունակում է նաև թանկարժեք (ոսկի, արծաթ) և հազվագյուտ (ռենիում, կադմիում, սելեն և այլն) բարձրարժեք մետաղներ: Հազվագյուտ և համաշխարհային շուկայում բարձրարժեք նշանակություն ունեցող ուղեկից այդ մետաղներն անհրաժեշտ տեխնոլոգիաների բացակայության պատճառով

Հայաստանում առայժմ չեն կորզվում: Դրանք հանքարդյունաբերական մյուս թափոնների հետ տեղափոխվում և կուտակվում են պոչամբարներում:

Բազմամետաղային (կապար, ցինկ, թանկարժեք և հազվագյուտ մետաղներ) հանքավայրերից նշանավոր են **Ախթալայինը և Շահումյանինը** (Կապան): Աշխարհում ալյումին ստանում են մի քանի տեսակի հումքից: Հայաստանում տարածված է **նեֆելինային սիենիտ** կոչվող հանքային հումքատեսակը: Դա համալիրային հանքատեսակ է, որից կարելի է ստանալ նաև բարձրորակ ցեմենտ և քիմիական տարբեր նյութեր: Այդ հումքի հարուստ հանքավայրեր հայտնաբերված են **Փամբակի** (Թեժ լեռան հանքավայր) և **Մեղրու** (Շվանիձոր) լեռներում:

Ազնիվ մետաղներից ՀՀ-ում կարևոր նշանակություն ունեն ոսկու պաշարները: Ոսկին այսպես կոչված **«արմատային»** հանքերում հանդես է գալիս գունավոր տարբեր մետաղների հետ, առանձին բնակտորներով, ինչպես նաև որոշ գետերի ավազաբերուկների մեջ՝ **«ցրոնային» տեսքով**: ՀՀ տարածքում հիմնական արմատական հանքավայրերն են **Սոթքինը և Մեղրաձորինը**:

Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրը

Մեր երկրի ընդերքում հայտնաբերված սև մետաղներից ամենատարածվածը երկաթն է: Համեմատաբար խոշոր են **Սվարանցի, Հրազդանի և Աբովյանի** (Կապուտանի) հանքավայրերը:

Ոչ մետաղական օգտակար հանածոներից հանրապետության ընդերքը հարուստ է շինանյութերի՝ բազալտի, տուֆի, կրաքարի, մարմարի, պեմզայի, պեռլիտի ու զանազան կավերի պաշարներով: Տուֆը հրային ապար է, որն իր թեթևության,

դիմացկունության և գեղեցիկ տեսքի շնորհիվ լայն կիրառություն ունի շինարարության մեջ: Տուֆակերտ են պատմական հուշարձանների մեծ մասը, բազմաթիվ բնակելի շինություններ: Տուֆի խոշորագույն հանքավայրերը գտնվում են **Արագածի լանջերին, Շիրակում, Մերձերևանյան շրջանում**:

ՀՀ-ում գործնականում անսպառ են **բազալտի** պաշարները: Այս դիմացկուն շինաքարի շերտերը հազարավոր քառակուսի կիլոմետր տարածք են զբաղեցնում: Արժեքավոր շինանյութ է **գրանիտը:** Մեզանում այն օգտագործվում է որպես որմնաքար, շենքերի արտաքին և ներքին երեսպատման համար և քանդակագործության մեջ: Տարածված է Սյունիքի և Լոռու մարզերում:

Հրաբխային ապարաշերտերում լայն տարածում ունեն **օբսիդիանն** ու **պեռլիտը**: **Օբսիդիանը** ապակենման, բազմերանգ լեռնային ապար է, որին անվանում են նաև «**սատանի եղունգ**»: Մեր երկրում հայտնաբերվել են օբսիդիանից նախամարդու պատրաստած զանազան գործիքներ (բրիչ, հատիչ և այլն): Օբսիդիանից այժմ պատրաստում են զանազան իրեր՝ զարդեր, հուշանվերներ և այլն:

Պեռլիտը արտաքուստ նման է օբսիդիանին և հանդես է գալիս ավազի ու խճի տեսքով: Այն հեշտությամբ ենթարկվում է ջերմային մշակման և տարբեր տեսակի շինարարական իրերի ու հախճապակու արտադրության համար արժեքավոր հումք է: Արդյունաբերական պաշարները կուտակված են **Արագածի** (Թալինի տարածաշրջան) հանքավայրում:



Երկրաբանական հրաշք. Գառնու ձորի բազալտային սյուները

ՀՀ-ն ունի **կրաքարի** հարուստ պաշարներ: Կրաքարից ստանում են ցեմենտ, մետաղաձուլության մեջ օգտագործվում է որպես բովախառնուրդ (ֆլյուս), իսկ քիմիական արդյունաբերության մեջ՝ որպես կալցիումի կարբիդի արտադրության հումք և այլն:

Հանրապետության ոչ մետաղային օգտակար հանածոներից նշանակալից են նաև կերակրի աղի, ֆոսֆորիտների ու կավերի պաշարները: **Կերակրի աղի** շատ մեծ պաշարներ կան Երևան-Արմավիր գոտում: Կերակրի աղն օգտագործվում է ոչ միայն սննդի արդյունաբերության մեջ և կենցաղում, այլև քիմիական արդյունաբերության մեջ՝ քլորային տարբեր միացություններ ստանալու համար:

ՀՀ-ն հարուստ է **հանքային ջրերի աղբյուրներով**: Դրանք տարածված են երկրակեղևի խորքային բեկվածքներին հարող տարածքներում, **գազերով հագեցած տաք կամ սառը աղբյուրների ձևով**: Մեր երկրում կա հանքային ջրերի շուրջ 700 աղբյուր: Հատկապես նշանավոր են **Ջերմուկի, Արզնու, Բջնիի, Դիլիջանի, Հանքավանի** հանքային աղբյուրները: Դրանցից մի քանիսի մոտ կառուցվել են խոշոր առողջարաններ: